7-րդ դասարան, II փուլ

Տարբերակ 2

1) Հաշվեք $\left|\frac{8}{5}:2,5-3,2\cdot\frac{1}{3}\right|\cdot 4\frac{13}{16}$ արտահայտության արժեքը:

2) A,B,C թվերից մեկը դրական է, մեկը բացասական, մեկը 0: Հայտնի, է որ $B=A\cdot\left(A-C\right)$: A,B,C թվերից ո՞րն է դրական, ո՞րը բացասական, ո՞րը հավասար 0: Պատասխանը հիմնավորել:

3) Երեք ծովահեն որոշեցին բաժանել մետաղադրամներով լի արկղը: Առաջին ծովահենը վերցրեց մետաղադրամների երեք յոթերորդը, երկրորդը՝ մնացածի 51%-ը: Պարզվեց, որ երրորդ ծովահենը ստացավ 4 մետաղադրամ պակաս, քան երկրորդը: Քանի՞ մետաղադրամ կար արկղում:

4) Ավազանը ունի երեք ծորակ՝ 1-ինը և 2-րդը լցնող, իսկ 3-րդը դատարկող: 1-ին և 3-րդ ծորակները միասին դատարկ ավազանը լցնում են 12 ժամում, իսկ 2-րդ և 3-րդ ծորակները միասին դատարկ ավազանը լցնում են 24 ժամում: Քանի՞ ժամում կլցնեն դատարկ ավազանը երեք ծորակները միասին, եթե 3-րդ ծորակը աշխատի երկու անգամ ավելի մեծ արտադրողականությամբ:

5) Չորս սկյուռիկներ կերան 2016 կաղին, յուրաքանչյուրը ամենաքիչը 105 հատ: Հայտնի է, որ առաջին սկուռիկը կերել է ամենաշատ կաղին, իսկ երկրորդը և երրորդը միասին կերել են 1273 կաղին: Քանի՞ կաղին է կերել առաջին սկյուռիկը:

6) Գտեք 1, 2, 4, 5 թվանշաններով գրվող այն քառանիշ թվերի քանակը, որոնց թվանշանները

տարբեր են և, որոնց գրառման մեջ 2-ը գտնվում է 1-ից աջ:

7) Շարքում կանգնած է 8 երեխա: Հայտնի է, որ բոլոր աղջիկները միասին ունեն այնքան կոնֆետ, որքան բոլոր տղաները միասին: Երբ շարքում կանգնած յուրաքանչյուր երեխա իրենից աջ գտնվող բոլոր երեխաներին տվեց մեկական կոնֆետ, պարզվեց, որ բոլոր աղջիկների կոնֆետների քանակը ավելացավ 16-ով: Գտեք շարքում կանգնած աղջիկների քանակը: Պատասխանը հիմնավորել:

8) A բնական թվի իրարից տարբեր երեք փոքրագույն բաժանարարների գումարը հավասար է 8: Քանի՞ զրոյով կարող է վերջանալ A թիվը: